600.0114.07.04.21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

7 ապրիլի 2021 թվականի №114Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-Ի №383Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) 2021 թվականի մարտի 30-ին դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով 44 օրով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի №383Ա որոշմամբ «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0622 լիցենզիայով (այսուհետ՝ ԼԷ №0622 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը: Ընկերությունը հայտնել է, որ Կայանի կառուցումը ԼԷ №0622 լիցենզիայով սահմանված ժամկետում հնարավոր չի եղել ավարտել, քանի որ կորոնավիրուսային հիվանդության հետ կապված՝ հայտարարված արտակարգ դրությամբ պայմանավորված՝ ընկերության հետ համագործակցող բանկերի կողմից ծրագրերի ֆինանսավորման դադարեցումը, ինչպես նաև 2020 թվականի սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից Արցախի Հանրապետության ուղղությամբ սկսված ռազմական գործողություններով պայմանավորված՝ հայտարարված ռազմական դրությունը հանդիսացել են շինարարական աշխատանքներին խոչընդոտող հանգամանքներ, քանի որ այդ ընթացքում խաթարվել է կապալառու կազմակերպությունների աշխատանքը, և այդ

կազմակերպություններին պատկանող շինարարական տեխնիկան և տրանսպորտային միջոցները բանակի կարիքների համար տրամադրման հետևանքով կասեցվել են Կայանի կառուցման աշխատանքները: Կայանի կառուցման աշխատանքներին էապես խոչընդոտել է նաև շինարարություն իրականացնող կազմակերպության մի շարք աշխատակիցների զորակոչման հանգամանքը, որի պատճառով հիմնականում դադարեցվել էր նաև նյութերի և ապրանքների մատակարարումը: Քանի որ նշված հանգամանքներն ունեն արտակարգ և անկանխելի բնույթ, դուրս են Ընկերության վերահսկողությունից, հետևաբար Ընկերությունը խնդրել է ԼԷ №0622 լիցենզիայի պայմանների չկատարումը համարել ֆորս մաժոր և իր ներկայացրած երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե չփոխանցել,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 76-րդ կետի համաձայն՝ լիցենզիայում ամրագրված ժամկետի (ժամանակահատվածի) երկարաձգման համար լիցենզավորված անձը լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից ոչ շուտ, քան 3 ամիս, և ոչ ուշ, քան 15 աշխատանքային օր առաջ հայտ է ներկայացնում Հանձնաժողով՝ նշելով հայցվող ժամկետը, մինչդեռ Ընկերությունը հայտը ներկայացրել է 9 աշխատանքային օր առաջ,

գ) Հանձնաժողովը 2021 թվականի մարտի 30-ից Ընկերության նկատմամբ հարուցել է վարչական վարույթ՝ Կարգի 76-րդ կետի խախտման փաստի ուսումնասիրության նպատակով,

դ) Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի՝

- 7-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշում է ընդունում երաշխիքով սահմանված գումարի կեսը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե փոխանցելու մասին, եթե որոշում է ընդունել արտադրության լիցենզիայով սահմանված կառուցման (վերակառուցման) ժամանակահատվածը երկարաձգելու մասին,
- 10-րդ կետի համաձայն՝ լիցենզավորված անձի ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Կարգով սահմանված դեպքերում Հայաստանի Հանրապետության պետական

բյուջե չի փոխանցվում, եթե նրա կողմից լիցենզիայի պայմանների չկատարումը կամ ոչ պատշաճ կատարումը հետևանք է ֆորս մաժորի,

ե) Հանձնաժողովը, ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները, գտնում է, որ ԼԷ №0622 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը ենթակա է երկարաձգման ընկերության կողմից հայցվող 44 օր ժամկետով, իսկ Ընկերության ներկայացրած երաշխիքով սահմանված գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե ենթակա չէ փոխանցման, քանի որ Ընկերության կողմից ԼԷ №0622 լիցենզիայի պայմանների չկատարումը հետևանք է ֆորս մաժորի: Մասնավորապես, Ընկերության կողմից Կայանի կառուցման աշխատանքները սահմանված ժամկետում ավարտելուն խոչընդոտել են սույն թվականի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 9-ը Ադրբեջանի Հանրապետության զինված ուժերի կողմից ձեռնարկված ռազմական գործողությունները, դրանցով պայմանավորված կապալառու կազմակերպություններին պատկանող շինարարական տեխնիկայի, տրանսպորտային միջոցների զինված ուժերի կարիքների համար հանձնման և Կայանի շինարարության աշխատանքներին ներգրավված մի շարք աշխատակիցների զորակոչման հանգամանքները, որոնք որևէ կերպ չէին կարող գտնվել Ընկերության վերահսկողության ներքո կամ կանխվել վերջինիս կողմից,

զ) Ընկերության կողմից ԼԷ №0622 լիցենզիայով ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարումն ապահովելու նպատակով Հանձնաժողով ներկայացված «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հուլիսի 25-ի №5320-02 գրությամբ տրամադրված և 2020 թվականի հուլիսի 6-ի №3975-02 գրությամբ գործողության ժամկետը երկարաձգված երաշխիքի գործողության ժամկետը 2021 թվականի օգոստոսի 15-ն է,

է) հարուցված վարույթի շրջանակում Ընկերությունը 2021 թվականի ապրիլի 1-ի գրությամբ, ըստ էության, ընդունել է թույլ տրված Կարգի խախտումը,

ը) իրականացված վարչական վարույթի շրջանակում փաստվել է, որ Ընկերությունը խախտել է Կարգի 76-րդ կետի պահանջը, այն է՝ հայտը սահմանված լիցենզիայի գործողության ժամկետի (ժամանակահատվածի) ավարտից առնվազն 15 աշխատանքային օր առաջ ներկայացնելու փոխարեն ներկայացնելով 9 աշխատանքային օր առաջ, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասը, 42-րդ հոդվածի 1-ին և 9-րդ մասերը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Կարգը, այդ թվում՝ Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման և պետական բյուջե փոխանցման կարգի 10-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Քառասունչորս օրով երկարաձգել Հանձնաժողովի 2018 թվականի հոկտեմբերի 10-ի «ՏԱԹԵՎԻ ԱՆԱՊԱՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №383Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Անապատ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ №0622 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ որոշման մեջ «մինչև 2021 թվականի ապրիլի 11-ը» բառերը փոխարինելով «մինչև 2021 թվականի մայիսի 25-ը» բառերով:
2. Կարգի 76-րդ կետի պահանջի խախտման համար Ընկերությանը նախազգուշացնել:
3. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում կարող է բողոքարկվել Հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի ապրիլի 11-ից, բացառությամբ որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում Ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՕՐԻՆԱԿԱՆ ԱՆՁԻ ՀԱՄԱՐ
КОМИССИЯ ПО ПУБЛИЧНЫМ УСЛУГАМ РА
PUBLIC SERVICES REGULATORY COMMISSION OF THE RA
02531594

ք. Երևան
7 ապրիլի 2021թ.